իբ/ Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50 %-ի չափով),

իգ/ Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման և դադարեցման մասին որոշումների ընդունումը,

իդ/ Բանկի կողմից բաժնետերերի ժողովի հետ կապված տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի մասին, ներառյալ ծանուցման մամուլի միջոցի ընտրության որոշումը,

իե/ խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,

իզ/ առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը և մասնակցությունը,

իէ/ օրենսդրությամբ սահմանված այլ իրավասությունների իրականացումը:

6.23. Բանկի խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Բանկի խորհուրդը տարին առնվազն մեկ անգամ Բանկի խորհրդի նիստում քննարկում է և անհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերը և ներքին իրավական այլ ակտերը: Եռամսյակը առնվազն մեկ անգամ, համաձայն իր կողմից հաստատված ձևի, Բանկի խորհուրդը քննարկում է Բանկի գործադիր տնօրենի (Վարչության), ներքին աուդիտի ստորաբաժանման և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները:

6.24. Բանկի խորհրդի նիստերը հրավիրվում են նրա նախագահի կամ տեղակալի կողմից առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

6.25. Բանկի խորհրդի նիստերը գումարում է Բանկի խորհրդի նախագահը՝ իր, Բանկի խորհրդի անդամի, գործադիր

legislation.

6.23. To organize its work more effectively the Board of the bank may form committees. The Board shall at least once a year examines and, if necessary, reviews the main directions of the Bank's operations, strategy, procedures and internal regulations. The Bank Board shall At least on quarterly basis and in a prescribed form consider the reports of the Executive Director (Management Board), internal audit department and the Accountant General.

6.24. The sessions of the Bank Board shall be convened at least once every two months by its president or his deputy.

6.25. Board meetings of the bank shall be convened by the president of the bank board by his own demand or by the written request of a board member, the executive director (the management), the bank's internal audit division head, the person carrying out the bank's external audit, RA Central Bank Board, as well as the shareholder (shareholders) holding 5 or more percent of voting shares. A bank Board meeting is competent (has quorum) if attended by more than half of the board members. Board decisions are adopted by majority vote of its members. In case of equality of votes the president's vote is decisive. The participation of the persons not being members of the board at a board meeting is regulated by the regulations for the Board established by the general meeting and decisions of the Board

6.26. The bank board meeting may as well be held by way of absentee voting (by inquiry). The issues referred to in Paragraphs 6.22 (c), (d), (i) to (jc) of this Charter as well as the approval of long-term development plan of the Bank, electing the President of the Board, may not be resolved by Board meetings held remotely. The Board can adopt decisions at a meeting at which all of the participants can communicate with each other by telephone or any other communication devices including, email, software and application platforms (including mobile applications) in a real-time mode, during which all of the persons participating at meetings will be able to listen to one another and the participation in such meeting may constitute a personal presence thereat, ie such meeting will not be considered one held through remote voting (by inquiry) and its protocol will be made in accordance with paragraph 6.27.

6.27. Board meetings are recorded. Minutes shall be prepared within 10 days following the respective meetings. Board meeting minutes shall be signed by all members participating in the meeting. The procedure for of holding meetings of the Board and drawing up the protocols thereof has been reflected in the regulations of the bank board approved by the General Meeting of the Bank.

The issues reserved for exclusive competence of the board of the bank may not be yielded thereby to the bank's executive body.

6.28. The President of the Board may

a) be elected by a majority vote of the members of the board,

b) organize the work of the Board of the Bank (convene consultations, give instructions within its competence),

c) convene and preside over meetings of the Board,

d) organize the preparation of board meeting minutes,

e) preside at general meetings of shareholders,

f) conclude contracts with the executive director (President of the management board) and the board members.

In the absence of Board President the duties thereof are undertaken by the deputy president of the Board.

The Board activities are carried out in accordance with regulations of the Board established by the General Meeting.

6.29. The chief executive officer of the bank (President of the

տնօրենի (Վարչության), ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով: Բանկի խորհրդի նիստն իրավասու է (քվորում ունի), եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների առնվազն կեսը: Բանկի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է: Խորհրդի նիստերին խորհրդի անդամ չհանդիսացող անձանց մասնակցությունը կարգավորվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատված խորհրդի կանոնակարգով և որոշումներով:

6.26. Բանկի խորհրդի նիստերը կարող են անցկացվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով): Սույն կանոնադրության 6.22 կետի (գ), (դ), (թ) և (ժզ) ենթակետերում նշված, ինչպես նաև Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Բանկի խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Բանկի խորհրդի հեռակա նիստերի ժամանակ: Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ հաղորդակցական սարքերի, կապի կապի, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմով, որոնց շնորհիվ նիստին մասնակցող բոլոր անձինք ի վիճակի կլինեն լսել միմյանց, և նիստին մասնակցելը կհանդիսանա նիստին ներկայություն անձամբ, այսինքն՝ նման նիստը չի համարվի հեռակա քվեարկությամբ (հարցման) կարգով անցկացված նիստ և դրա արձանագրությունը կկազմվի 6.27 կետի համաձայն:

6.27. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները: Բանկի խորհրդի նիստերի վարման և արձանագրությունների կազմման կարգը արտացոլված է Բանկի ընդհանուր ժողովի կողմից հաստատված Բանկի խորհրդի կանոնակարգում:
Բանկի խորհրդի բացառիկ իրավասությանը կանոնադրությամբ վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել Բանկի գործադիր մարմնին:

6.28. Բանկի  խորհրդի նախագահը.
ա/ ընտրվում է Բանկի խորհրդի անդամների կողմից, խորհրդի անդամների կազմից՝ ձայների մեծամասնությամբ,
բ/ կազմակերպում է Բանկի խորհրդի աշխատանքները (հրավիրում է խորհրդակցություններ, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ),
գ/ գումարում և նախագահում է Բանկի խորհրդի նիստերը,
դ/ կազմակերպում է խորհրդի  նիստերի արձանագրության վարումը, ե/ նախագահում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովներում,
զ/ կնքում է Բանկի գործադիր տնօրենի (Վարչության նախագահի) և վարչության անդամների հետ պայմանագրեր:
Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Բանկի  խորհրդի նախագահի տեղակալը:
Բանկի խորհրդի գործունեությունը իրականացվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատված խորհրդի կանոնակարգի համաձայն:

6.29. Բանկի գործադիր տնօրենը (Վարչության նախագահը), որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է Բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է

management board) shall within his exclusive competence represent the Bank in the Republic of Armenia and foreign countries, enter into transactions on behalf of the Bank, acting on behalf of the Bank without a power of attorney.

6.30. The chief executive officer (President of the management board)

a) manages the Bank property, including financial resources, extends orders, gives mandatory instructions and monitors their implementation,

b) hires and dismisses Bank employees,

c) uses incentives and disciplinary measures as regards the employees,

d) performs distribution of responsibilities between Bank management board deputy president and management board members,

e) resolves any other issues vested by this charter, performs other functions within his competence.

6.31. The Board is composed of the Executive Director (President of the Management Board), deputy chief accountant, as well as other bank officials appointed by the Board.

6.32. The Bank's management:

a) submit the internal regulations of the bank approved by the Board of the bank, the regulations of the isolated subdivisions, the Bank's administrative structure for approval by the Board.

b) provides the implementation of the decisions of the general meeting and the Board,

c) carries out the overall management of the Bank's activity,

d) organizes realization of the decisions of the General Meeting and the Board,

e) holds its meetings when necessary but no less than once a month,

f) within its competence determines tariffs for services rendered by the Bank, cash services, provides for maintenance of AMD and other currency values, Bank's accounting and reporting and implements their control,

g) sets interest rate policy on the asset and liability operations line,

h) monitors compliance of the Bank and its structural divisions with the laws,

i) carries out preliminary discussion of the issues to be submitted by the Board to the General Meeting of the Shareholders for consideration,

j) considers the materials of oversights and checkups, the statements by the managers of the subdivisions of the bank,

ja) approves the instructions concerning the rights and duties of the managers and employees of the subdivisions of the bank,

jb) appoints the officers of the bank within its competences

jc) appoints the other issues submitted to the consideration of the management board by the CIO (president of the Management board) management board members and bank structural subdivisions.

The issues not having been reserved for the competence of the general meeting, the board or the internal audit subdivision by the lows of this charter belong to the competence of the CIO (the management board).

6.33. The rights and duties of the CIO (President of the Management board) and the members of the Management board and the areas coordinated thereby are defined by this charter, the Management regulations approved by the Board, the structure of the Bank, other legal acts and the contracts made with the president of the bank board the

լիազորագրեր:

6.30. Բանկի գործադիր տնօրենը (Վարչության նախագահ).

ա/ տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

բ/ աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի աշխատակիցներին,

գ/ Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

դ/ կատարում է Բանկի վարչության նախագահի տեղակալների և վարչության անդամների միջև պարտականությունների բաշխում,

ե/ լուծում է սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ հարցեր, իր իրավասության շրջանակներում իրականացնում այլ գործառույթներ:

6.31. Բանկի վարչությունը կազմվում է գործադիր տնօրենից (Վարչության նախագահից), նրա տեղակալներից, գլխավոր հաշվապահից, ինչպես նաև Բանկի այլ պաշտոնատար անձանցից, որոնք նշանակվում են Բանկի խորհրդի կողմից:

6.32. Բանկի վարչությունը.

ա/ խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը.

բ/ ապահովում է ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի որոշումների կատարումը, գ/ իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը,

դ/ կազմակերպում է ընդհանուր ժողովի, Բանկի խորհրդի և իր կողմից ընդունված որոշումների կատարումը,

ե/ գումարում է իր նիստերը ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ,

զ/ իր իրավասության շրջանակներում սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, դրամարկղային սպասարկման, դրամի ու Բանկի այլ արժեքների պահպանումը, հաշվառումն ու հաշվետվությունը և իրականացնում է դրանց վերահսկողությունը,

է/ սահմանում է ակտիվային ու պասիվային գործառնությունների գծով տոկոսադրույքների քաղաքականությունը,

ը/ վերահսկում է օրենսդրության պահպանումը Բանկում և նրա կառուցվածքային ստորաբաժանումներում,

թ/ նախապես քննարկում է վարչության կողմից Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի քննարկմանը ներկայացվող հարցերը,

ժ/ քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը, Բանկի ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները,

ժա/ հաստատում է բանկի աշխատողների և մյուս ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների իրավունքների ու պարտականությունների մասին հրահանգները,

ժբ/ կատարում է Բանկի պաշտոնատար անձանց նշանակում իր իրավասության շրջանակներում,

ժգ/ քննարկում է գործադիր տնօրենի (Վարչության նախագահի), վարչության անդամների և Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից վարչության քննարկմանը ներկայացված այլ հարցերը:

Այն հարցերը, որոնք օրենքով կամ կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ընդհանուր ժողովի, խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են գործադիր տնօրենի (վարչության) իրավասությանը:

6.33. Բանկի գործադիր տնօրենի (Վարչության նախագահի) և վարչության անդամների իրավունքներն ու

duties of the CIO may temporarily be vested in the deputy CIO (President of the Management board) replacing him. The positions of the CIO of the bank and the management members may be engaged only by the consent of the Bank Board.

6.34 A management board meeting is entitled I solve the submitted issues if at least ½ of management members are present thereat. The Decisions are adopted by simple majority vote. In case of equilibrium the CIO (President of the Management board) may have a casting vote. The Management board meeting minutes are signed by all the members participating thereat. Management board meeting are organized by the CIO that shall sign under the decisions of the meetings. Summoning Management board meetings and making up of minutes is regulated by the Management regulations approved by the Bank Board.

6.35 The accountant in chief of the bank realizes the rights and obligations anticipated for an accountant in chief by RA law "about accounting".

6.36. The accountant in chief of the bank is appointed by the Bank board according to the proposal of the Bank CIO.

6.37 The responsibilities of the chief accountant of the bank may not be vested into the General Meeting, the Board, the members of the executive body, the internal audit department or any other person.

6.38 The accountant in chief of the bank is responsible for running the accountancy accounting of the bank, its situation and trustworthiness, the timely submittal of the annual reporting, financial and statistics statements to the respective state government authorities provided for by the law and other legal acts as well as the participants and creditors of the bank the press and any other media means in accordance with this charter the law and other legal acts about trustworthiness of the provided financial information.

6.39. The bank's chief accountant shall at least on quarterly basis submit Financial Reporting to the Board of the bank and the CIO (the management board) in the form and with a content approved by the board.

6.40. The responsibility of the Members of the Bank Board, Managing Director (President of the management board) and the Management board members are provided for by RA legislation.

6.41 The Bank's internal regulations are published on the website of the bank by the manner established by the law, legal acts and the Bank's internal regulations.

պարտականությունները, համակարգվող ոլորտները որոշվում են սույն կանոնադրությամբ, խորհրդի կողմից հաստատված վարչության կանոնակարգով, Բանկի կառուցվածքով, այլ իրավական ակտերով և Բանկի խորհրդի նախագահի հետ նրանց կնքած պայմանագրերով: Գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող գործադիր տնօրենի (Վարչության նախագահի) տեղակալներին: Բանկի գործադիր տնօրենը և վարչության անդամները կարող են այլ կազմակերպություններում վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Բանկի խորհրդի համաձայնությամբ:

6.34. Վարչության նիստն իրավասու է լուծել ներկայացվող հարցերը, եթե նիստին ներկա են վարչության անդամների առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են պարզ մեծամասնությամբ բաց քվեարկությամբ: Հավասար ձայների դեպքում գործադիր տնօրենի (Վարչության նախագահի) ձայնը համարվում է որոշիչ: Վարչության նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները: Վարչության նիստերը կազմակերպում և վարում է գործադիր տնօրենը, որն ստորագրում է նիստի որոշումները: Բանկի վարչության նիստերի գումարումը, արձանագրությունների կազմումը կարգավորվում է Բանկի խորհրդի հաստատած Բանկի վարչության կանոնակարգով:

6.35. Բանկի գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

6.36. Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի գործադիր տնօրենի ներկայացմամբ:

6.37. Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ընդհանուր ժողովին, խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

6.38. Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերի և Բանկի կանոնադրությանը համապատասխան:

6.39. Բանկի գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի խորհրդին և գործադիր տնօրենին (վարչությանն) է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

6.40. Բանկի խորհրդի անդամների, գործադիր տնօրենի (Վարչության նախագահի), վարչության անդամների պատասխանատվությունը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ:

6.41. Բանկի գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերը հրապարակվում են Բանկի ինտերնետ կայքում օրենքով, ենթաօրենսդրական ակտերով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

## 7. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՈՒՄ

## 7. ACCOUNTANCY, REPORT AND INSPECTION IN THE BANK

7.1. Բանկի գործունեության արդյունքներն արտացոլվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական բանկին ներկայացվող

7.1. The results of the Bank activities are reflected in reports presented to the Central Bank of the Republic of Armenia in accordance

հաշվետվություններում:

7.2. Բանկը հաշվապահական հաշվառում վարում է և հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները կազմում ու ներկայացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն:

7.3. Բանկի ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

7.4. Բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկն այդ վերահսկողությունն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

with procedure defined by Central Bank of the Republic of Armenia.

7.2. The Bank leads accountancy and makes and submits published financial reports according to Laws of the Republic of Armenia "On Accounting" and "On Banks and Banking Activity".

7.3. The fiscal year of the Bank begins from January 01 and ends in December 31 of the same year.

7.4. The exclusive right of inspection of the Bank's activity belongs to the Central Bank of RA. The Central Bank realizes the mentioned inspection according to the procedure defined by RA Law "On Central Bank of the Republic of Armenia".

## 8. ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

8.1. Յուրաքանչյուր տարի Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացվում է արտաքին աուդիտի կողմից: Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձն ընտրվում է մրցույթով՝ համաձայն գործող կարգի և հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից:

8.2. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատերերի պահանջով, որոնք ընտրում են արտաքին աուդիտ իրականացնող անձին, վճարելով նրա ծառայությունների դիմաց: Ընդ որում նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար: Բանկի արտաքին աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի միջոցների հաշվին:

8.3. Արտաքին աուդիտի եզրակացությունը Կենտրոնական բանկին է ներկայացվում մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

## 8. EXTERNAL AUDIT OF THE BANK

8.1. Each year the inspection of financial-economic activity of the Bank is realized by an external audit. The person realizing external audit of the Bank is elected by competition according to acting procedure and is approved by general meeting.

8.2. Inspection of the financial-economic activity of the Bank by an external auditor may be also carried out by the demand of the Shareholders of at least 5% of the shares of the Bank entitled to vote. In this case such shareholders shall select and pay the fee for the rendered services of the external audit themselves; moreover they may have their expenses reimbursed by the Bank if General Meeting decides that such an audit has been justified for the Bank. The Board of the Bank can invite external audit of the Bank on the Bank's accounts.

8.3. The conclusion of the external auditor shall be presented to the Central Bank of RA until 1st of May of the year following the fiscal year.

## 9. ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

9.1. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները նշանակվում են Բանկի խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

9.2. Բանկի ներքին աուդիտը՝

ա/ Բանկում հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ.

բ/ հսկողություն է իրականացնում Բանկի գործադիր տնօրենի (վարչության), տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, գործադիր տնօրենին (վարչությանը) տրված հանձնարարականների կատարման նկատմամբ.

գ/ եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

9.3. Ներքին աուդիտի ղեկավարը Բանկի խորհրդին և գործադիր տնօրենին (վարչությանը) ներկայացնում է հաշվետվություններ՝

հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.

արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում,

## 9. INTERNAL AUDIT SUBDIVISION OF BANK

9.1. The Head and members of the Internal Audit Subdivision are appointed by the Bank Board.

Members of the governing bodies of the Bank, other managers and employees, as well as persons affiliated with the members of executive body may not be members of Internal Audit.

9.2. Internal Audit of the Bank shall:

a) effect control over the Bank current activities and operational risks;

b) exercise control over compliance by the Executive Director of the Bank (Management Board), territorial and structural subdivisions with requirements of the laws, other legal acts and the Bank internal acts, as well as over fulfillment of recommendations issued to the Executive Director of the Bank (Management Board);

c) prepare conclusions and proposals on issues submitted by the Bank Board and raised at its own initiative.

9.3. The Head of Internal Audit shall submit to the Bank Board and Executive Director (Management Board) the following reports:

- ordinary, i.e. concerning results of inspections envisaged by the annual program;
- extraordinary, if the Internal Audit Subdivision has reasonable grounds to believe that it has revealed material violations, and where such violations have resulted from actions or inactivity of the Executive

եթե խախտումները հետևանք են գործադիր տնօրենի (վարչության) կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես խորհրդի նախագահին:

9.4. Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումները բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Բանկի խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

9.5. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեությունը կարգավորվում է ներքին աուդիտի կանոնակարգով և ներքին այլ իրավական ակտերով:

## 10. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

10.1. Բանկի գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում: Բանկի գործունեությունը դադարում է վերակազմակերպման (միացման, վերակազմավորման) և լուծարման միջոցով:

10.2. Բանկի վերակազմավորումը կատարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

10.3. Բանկի լուծարումը տեղի է ունենում հետևյալ դեպքերում՝
ա) լիցենզիան անվավեր ճանաչելու,
բ) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու,
գ) «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում,
դ) Բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ,
ե) օրենքով նախատեսված այլ հիմքերով:

10.4. Բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկի լուծարման նպատակով ընդհանուր ժողովի կողմից լուծարման նախնական համաձանություն ստանալու համար Կենտրոնական բանկին դիմելու մասին որոշման հիման վրա Բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում լուծարման նախնական համաձայնություն ստանալու հայտ՝ կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր, որոնց ցանկը սահմանում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը: ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լուծարման նախնական համաձայնություն ստանալուց հետո Բանկը կարող է միջոցներ ձեռնարկել պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ Բանկի պարտավորությունների դադարեցման ուղղությամբ, նշված պարտավորությունների դադարեցնելուց հետո միայն ընդհանուր ժողովը կարող է լուծարման մասին որոշում ընդունել և դիմել ՀՀ Կենտրոնական բանկ լուծարման թույլտվությունը ստանալու մասին՝ դրան կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր, որոնց ցանկը սահմանում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը: ՀՀ Կենտրոնական բանկը լուծարման թույլտվություն տալու դեպքում ընդունում է նաև Բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում: Ընդհանուր ժողովի որոշմամբ լուծարվող բանկերի թղթակցային հաշիվների վարման և փակման կարգը սահմանում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը:

10.5. Բանկի լուծարային հանձնաժողովը ստեղծվում է դատարանի կամ Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշումը կայացնելու պահից՝ առնվազն 5-օրյա ժամկետում Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ Բանկը լուծարելու, նրա գույքը (միջոցները) վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով: Այն կազմվում է առնվազն 3 անդամներից: Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որակավորում ստացած անձինք:

10.6. Մինչև լուծարային հանձնաժողովի ձևավորումը լուծարային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է տվյալ բանկի գործադիր տնօրենը կամ կառավարման նման

Director (Management Board) or the Board, the report shall be submitted directly to the President of the Board, promptly informing the latter prior to submission.

9.4. In case of revealing violations of the Laws or other legal acts, Internal Audit shall be liable to inform the Bank Board about such violations, at the same time recommending measures targeted at their correction and prevention of their further occurrence.

9.5. The activity of the Internal Audit Subdivision of the Bank is regulated by internal audit regulation and other internal legal acts.

## 10. TERMINATION OF THE BANK'S ACTIVITY

10.1. The activity of the Bank is terminated in cases and according to the procedure defined by legislation. The activity of the Bank is terminated through reorganization (consolidation, restructuring) and liquidation.

10.2. The reorganization of the Bank is carried out according to the procedure defined by RA Civil Code and other laws.

10.3. The Bank shall be liquidated:
a) in case of invalidation of license;
b) in case of revocation of license;
c) in cases envisaged by the RA Law "On Bankruptcy of Banks and Credit Organizations";
d) by the decision of the General Meeting of the Bank;
e) on other grounds stipulated by the Law.

10.4. On the basis of the decision on the general meeting of the bank to liquidate the company the bank shall submit a bid to RA Central Bank about liquidation with the view to receive initial approval thereof attaching thereto any documents substantiating the liquidation the list whereof is provided by RA Central bank board. After receiving the initial approval of RA Central Bank of such liquidation the bank may take measures to terminate the liabilities of the bank as regards its creditors where only the general meeting may make a decision on the liquidation after the termination of such liabilities and apply to RA central bank to receive its permit to such liquidation attaching thereto the documentation substantiating the liquidation whose list is prescribed by RA Central Bank board. In case of receipt of a permit for liquidation from RA Central Bank the latter will also make a decision to recognize the license of the bank to have lost its legal force. The order of operating and closing of correspondent accounts of the bank liquidated by the decision of the general meeting is fixed by RA Central Bank board.

10.5. Liquidation Commission shall be established within at least 5 days from the date of the respective decision of the court or the Central Bank Board by the procedure provided for by the Charter of the Bank with the view to liquidate the Bank, to sell its property (assets) and satisfy the legitimate claims of its creditors. It shall consist of at least 3 members. Only the persons appropriately qualified by RA Central Bank may become Liquidation commission president is and members.

10.6. Before appointing the Liquidation commission its powers will be exercised by the executive sector of the bank or a person realizing similar power. From the moment of formation of the liquidation Commission the powers of managing the liquidated bank are vested onto Liquidation commission.

10.7. Within three days after appointing of the Liquidation Commission the bank shall publish a formation in the press notify RA Central Bank about the liquidation and procedures and time- it's for submission of the

լիազորություններ իրականացնող անձը: Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում լուծարվող բանկի կառավարման լիազորությունները:

10.7. Լուծարային հանձնաժողով ստեղծելուց հետո երեք օրվա ընթացքում բանկը հայտարարություն է տալիս մամուլում և ծանուցում է ՀՀ Կենտրոնական բանկին բանկի լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի և ժամկետների մասին, որը չի կարող պակաս լինել երկու ամսից: Լուծարային հանձնաժողով չստեղծվելու դեպքում բանկի լուծարային հանձնաժողովն ստեղծվում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

10.8. Լուծարային հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով իրականացնում է բանկի լուծարման ընթացակարգը: Բանկի լուծարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով լուծարման գործընթացում գտնվող բանկում ՀՀ Կենտրոնական բանկը կարող է իրականացնել ստուգում:

10.9. Բանկի լուծարման դեպքում նրա բոլոր դրամական միջոցները, ներառյալ Բանկի գույքի իրացումից ստացված հասույթը, ուղղվում է Բանկի պարտատերերի պահանջների բավարարմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ մնացած մասով բաշխվում է Բանկի բաժնետերերի միջև Բանկի կանոնադրական հիմնադրամում իրենց բաժնեմասերին համամասնորեն:

10.10. Բանկը համարվում է լուծարված, լուծարային հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ ներկայացված լուծարվող բանկի ընդհանուր ժողովի կողմից հաստատված լուծարման հաշվեկշիռը հաստատելուց հետո: Բանկի լուծարման մասին ՀՀ Կենտրոնական բանկում վարվող բանկերի գրանցումների մատյանում գրառում է կատարվում, որից հետո բանկը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը դադարած: ՀՀ Կենտրոնական բանկն այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին: Լուծարային հանձնաժողովը բանկի լուծարման վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով տեղեկանք է հրապարակում:

## 11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Կանոնադրության դրույթները չեն կարող հակասել ՀՀ օրենսդրության պահանջներին, իսկ ՀՀ օրենսդրության փոփոխության դեպքում, մինչև Կանոնանդրությունում համապատասխան փոփոխության իրականացումը, Կանոնադրությունը գործում է այնքանով, որքանով չի հակասում ՀՀ Օրենսդրությանը:

11.2. Կանոնադրության փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում ՀՀ Կենտրոնական Բանկում գրանցվելու պահից:

creditors' claims, that shall not be less than two months. Cases if no liquidation commission is created as above the liquidation commission will be established by the decision of RA CB Board.

10.8. The liquidation commission shall exercise the bank liquidation by the manner established by aw. RA Central Bank may carry out checks in the bank found in liquidation to monitor the process if the liquidation of the bank.

10.9. In case of the liquidation of the bank all its assets, including proceeds from the sale of bank property, shall be used to meet the bank creditors demands by the manner set by the legislation of the Republic of Armenia, and the remaining part is distributed among shareholders in proportion to their shareholdings in the bank's charter fund.

10.10. The Bank shall be considered as liquidated after approval of the liquidation balance submitted to the Republic of Armenia Central Bank by the Liquidation Commission after the approval thereof by the general meeting of bank. A record is made in the register of the banks managed in RA Central Bank after the Bank will be considered as liquidated and its activity terminated. RA Central Bank shall which notify thereof the body responsible for state registration of legal entities. Liquidation Commission shall publish a statement about such liquidation by the manner prescribed by RA Central Bank.

## 11. FINAL PROVISIONS

11.1. The provisions of the Charter cannot contradict the requirements of RA legislation and in cases of RA Legislation changes, before realization the corresponding changes in the Charter, the present Charter is in force to the extent of not being controversial for RA legislation.

11.2. The additions or changes into the present Charter enter into force only after having been registered in the CB of the RA.